Արձանագրություն N 2
ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-26/11 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 մայիսի 2026թ.
ժամը 14[30]

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ.Գևորգյանը
անդամներ՝ Ս.Ամիրյանը, Մ.Մարկոսյանը
քարտուղար՝ Ս.Մկրտչյանը

I. Հայտերի բացման մասին

(Մ. Գևորգյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

N	**Մասնակիցների անվանումը**	**Մասնակիցների հասցեն և կապի միջոցները**
1.	Շուշանիկ Ղալթախչյան Ա/Ձ*	ՀՀ, ք. Երևան, Արամի 4, Հեռ. +374-41-33-39-00 shushanik.ghaltakhchyan@whitebone.org

* կազմակերպությունները ԱԱՀ վճարող չեն:

բ) Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել:

գ) - հայտերի հետկանչ կամ փոփոխություններ չեն եղել,
- հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

դ) Մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացված են ստորև.

Ծառայության				Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների **առանց ԱԱՀ**-ի,	
Հ/Հ	անվանումը	Չափի միավորը	Քանակը	Շուշանիկ Ղալթախչյան Ա/Ձ*	նախահաշվային գին
	2	3	4	5	6
1	Թիմային աշխատանքի և հաղորդակցության հմտությունների զարգացման ծառայության	դրամ	1	2500000	2 500 000

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Մ. Գևորգյան)

2. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում առաջարկված ծառայության ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց,

ա/ Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է **ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-26/11** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին: Մասնակցի կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ հավելված-1 և հավելված-2:

բ/ Շուշանիկ Ղալթախչյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են **ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-26/11** ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որոշ փաստաթղթեր, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ում նշված աշխատակցի՝ Արևիկ Օհանյանի կողմից տվյալ ընթացակարգին մասնակցելու վերաբերյալ տեղեկանք, նշելով դասընթացում նրա կողմից իրականացվող աշխատանքի բնույթը և նրա համաձայնությունը:
- Առնվազն 2 իրականացված ծրագրերի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթեր՝ ծրագրի անվանումը, պատվիրատու կազմակերպության անվանումը, իրականացման տարեթիվը, ծրագրի համառոտ նկարագրությունը (մինչև 1 էջ), մասնակիցների մոտավոր թիվը:

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա/ Կասեցնել Գնահատող հանձնաժողովի նիստը մեկօրյա ժամկետով և մասնակցին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ. Գևորգյան)

3.1. **ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-26/11** ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել կասեցման ժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14^{00}, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Մ. Գևորգյան

անդամներ՝ _____ Ս. Ամիրյան

_____ Մ.Մարկոսյան

քարտուղար՝ _____ Ս.Մկրտչյան